ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-24/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«23» «01» 2025թ.** **ժ 15:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Գեղամ Չարվադարյան

Հանձնաժողովի անդամներ Վարդինե Դադոյան, Թագուհի Մոմչյան, Արմեն Սարգսյան, Հերմինե Սաֆարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան

Օրակարգում

1. ***Մասնակիցների հայտերում առկա անհամապատասխանությունների շտկման մասին.***
   ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կարիքների համար Մարտունի համայնքի Աստղաձորի մանկապարտեզի համար գույքի *ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-24/05»* ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2025թ. կայացած նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով:
   - <<ԲԵՍԹ ՖԻՐՄ>> ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ը ներկայացվել էր թերություններով մասնավորապես սխալ էր գրվել պատվիրատուի անվանումը, չէր երևում ԲԵՍԹ ՖԻՐՄ-ի իրավաբանական կարգավիճակը, թերի էր չափաբաժինների համարները, որոնց աճուրդին մասնակցել է ընկերությունը: Չէր ներկայացվել Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը:
   Մասնակցի կողմից շտկվել է ԲԵՍԹ ՖԻՐՄ-ի իրավաբան կարգավիճակը, Չափաբաժինների համարները ավելացվել են և ներկայացվել է Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, չի շտկվել պատվիրատուի անվանումը:
   - «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ»ՍՊԸ-ի կողմից չէր ներկայացվել Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը և ապրանքների տեխնիկական բնութագրերը: Մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկվել են:
   - «Աքսել» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ը և Հավելված 1.3-ը ստորագրված չեն, հավելվածներում հստակեցնել ընկերության անվանումը: Մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկվել է:
   - «Պարտեզ» տնկարանային տնտեսություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չէին ապրանքների տեխնիկական բնութագրերը: Մասնակցի կողմից անհամապատասխանությունը շտկվել է:
2. **ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-24/05» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.**
   - «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ -ին ընթացակարգի 6-րդ, 10-րդ, 12-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 26-րդ, 31-րդ, 61-րդ, 64-րդ, 65-րդ, 67-րդ, 71-րդ, 72-րդ, 73-րդ և 76-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից:
   - <<Աքսել>> ՍՊԸ-ին ընթացակարգի 77-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:
   - <<Պարտեզ» տնկարանային տնտեսություն>> ՍՊԸ–ին ընթացակարգի 5-րդ, 9-րդ, 68-րդ, 74-րդ և 78-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից:

- <<ԲԵՍԹ ՖԻՐՄ>> ՍՊԸ -ի կողմից անհամապատասխանությունը չի շտկվել, հետևաբար ընթացակարգի 11-րդ, 22-րդ, 29-րդ, 32-րդ, 75-րդ, 79-րդ և 80-րդ չափաբաժինները համարել չկայացած:

3. Կիրառել անգործության ժամկետ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել gnumner.am կայքում:

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաձողովի նախագահ՝ _____ Գ. Չարվադարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Դադոյան

_____ Թ. Մոմջյան

_____ Ա. Սարգսյան

_____ Հ.Սաֆարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան